ԹԵՄԱ 3 ԱՐԵՎԵԼՔԻ ԵՎ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

§ 45. ՉԻՆԱՍՏԱՆԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

1

Կայսրը ուներ անսահմանափակ իշխանություն, երկիրը կառավարում էր խորհրդականների և աստիճանավորների միջոցով: Կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Յան Ցզյունը ստեղծեց ***բանակի, ֆինանսների, հասարակական աշխատանքների, արդարադատության և պատիժների գործակալություններ***: Պետական պաշտոնյաները դասակարգվեցին ***9 աստիճանների*** և վարձատրվում էին ըստ զբաղեցրած աստիճանի: Պաշտոնյաներին պարբերաբար մի նահանգից մյուսն էին փոխադրում: Կայսրը հաճախ էր այցելում նահանգներ և ստուգում նրանց աշխատանքը:



Կառուցվեց նոր մայրաքաղաք ***Չանանը***: Կատարվեցին Մեծ պատի վերականգնման աշխատանքներ: ***Կառուցվեց Հուանհե և Յանցզի գետերը միացնող 1000 կմ երկարությամբ Մեծ ջրանցքը:*** Հավաքվեցին ու կարգավորվեցին հին ձեռագրերն ու մատյանները:

Տան կայսրության կառավարման ժամանակաշրջանը համարվում է Չինաստանի ոսկե դարը: Այս ժամանակաշրջանում ծաղկում ապրեցին գեղարվեստական խեցեգործությունը, գալարաձև նկարչությունը, պոեզիան: Ստեղծվեցին ակադեմիաներ, որոնք պետք է նպաստեին արվեստի զարգացմանը: Ներդրվեց քննական համակարգ, որի միջոցով խրախուսվում էր գիտնականներին աշխատանքի անցնել պետական համակարգում:

Երկրի բոլոր հողերը հայտարարվեցին պետության սեփականությունը: Դրանցից հողաբաժիններ էին հատկացվում գյուղական համայնքներին, ազնվականներին, տաճարներին: ***Պետական հարկեր պարտավոր էին վճարել միայն գյուղացիները***:

Չնայած պետության ջանքերին և արգելքներին, ***մասնավոր հողատիրությունը գնալով ընդլայնվում էր:*** Լքված և խոպան հողերը դառնում էին դրանք մշակողի մասնավոր սեփականությունը: Ունեզրկվող գյուղացիները պետական ծանր հարկերից ազատվելու համար լքում էին պետական հողերը, անձնական կախման մեջ էին մտնում որևէ ավատատիրոջից և մշակում նրան պատկանող հողաբաժինը: Դրա հետևանքով պակասում էին պետության եկամուտները: Եկավ ժամանակ, երբ 50 միլիոն բնակչությունից հարկ էր վճարում ընդամենը 8 միլիոն մարդ:

Առաջին նախարար Յան Յանը 780 թ. հարկային բարեփոխում իրականացրեց: Այսուհետև պետությունը տարին երկու անգամ հարկ էր գանձում բոլոր հողատերերից՝ բերքի չափին համապատասխան: Հարկը թույլատրվում էր վճարել բնամթերքով կամ դրամով: Թույլատրվեց հողերի ազատ առք ու վաճառքը: Այսպիսով, ավատատիրական հողատիրությունը Չինաստանում օրինականացվեց և սկսեց ընդլայնվել: Ավատատիրության զարգացումը, ի վերջո, հանգեցրեց շահագործման ուժեղացմանը, 20-ամյա գյուղացիական պատերազմին և միասնական Տան կայսրության անկմանը: